



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

### ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

#### ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

20 ապրիլի 2020 թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Ա. Դիլանյանի

Ֆ. Թոխյանի

Քննության առնելով «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի

դիմումի ընդունելիության հարցը,

#### Պ Ա Ր Զ Ե Ց .

1. «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ն 2020 թվականի ապրիլի 3-ին դիմել է Սահմանադրական դատարան՝ խնդրելով.

«...որոշում կայացնել «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը ՀՀ Սահմանադրության 10-րդ, 60-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին չհամապատասխանելու վերաբերյալ»:

2. Ըստ դիմողի՝ վիճարկվող նորմը չի համապատասխանում Սահմանադրությանը, նախ՝ քանի որ նախատեսված չէ, թե բանկն ինչ պարտականության չկատարման համար է պարտավոր վճարել ավանդատուին երեք հարյուր հազար դրամ տուգանք: Այսինքն, ըստ դիմողի՝ տուգանք կամ այլ պատասխանատվություն նախատեսող օրենքի նորմով պետք է հստակ սահմանված լինի, թե պատասխանատվության ենթարկվող սուբյեկտն ինչպիսի գործողության կատարման, չկատարման կամ անգործության համար է ենթարկվում պատասխանատվության: Մինդեռ, ոչ միայն որոշակի և պարզ սահմանված չեն բանկի վարքագիծը և դրա հետևանքները, այլ նույնիսկ չի սահմանվել, թե ավանդատուի ո՞ր իրավունքների խախտման համար է տուգանքը ենթակա վճարման:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող նորմը չունի հստակ կարգավորում և հակասում է իրավական որոշակիության սկզբունքին, քանի որ ֆինանսական կազմակերպության համար պարզ և մատչելի չի նկարագրվում, թե կոնկրետ ո՞ր գործողության կամ անգործության համար է վերջինս վճարելու տուգանք սպառողին:

Դիմողը գտնում է, որ վիճարկվող նորմը չի համապատասխանում Սահմանադրությանը նաև այն համատեքստում, որ որպես տուգանք սահմանված երեք հարյուր հազար դրամն ակնհայտ անհամաչափ է առաջացող հետևանքներին: Տուգանքի նման չափը միտված է ոչ թե ավանդատուի իրավունքների վերականգնմանը, այլ կոչված է զրկելու ֆինանսական կազմակերպությանն իր սեփականությունից:

3. Ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ սույն դիմումով գործի քննության ընդունումը ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողը, ըստ էության, առաջադրում է երկու խումբ փաստարկներ: Առաջինն այն է, որ վիճարկվող նորմը չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, ինչի հետևանքով ֆինան-

սական կազմակերպության համար որոշակի չեն դրա գործողության շրջանակները, մասնավորապես՝ այն, թե ո՞ր պարտականությունների չկատարման համար է պարտավոր վճարել ֆինանսական կազմակերպությունն ավանդատուին:

Ինչպես վկայում է գործի դատավարական նախապատմության ուսումնասիրությունը, ընդհանուր իրավասության դատարանները համապատասխան դատական ակտերում արձանագրել են դիմողի կողմից «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ հոդվածներով նախատեսված պարտականությունների չկատարման փաստը, ինչն էլ հիմք է հանդիսացել վիճարկվող նորմով նախատեսված տուգանքի առաջացման համար: Դիմողն իր փաստարկներում վկայակոչում է, որ ավանդատուի իրավունքների խախտում է համարվում «Բանկային ավանդների ներգրավման մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ հոդվածներով նախատեսված պարտականությունների չկատարումը, ինչը վկայում է այն մասին, որ դիմողի համար առնվազն պարզ է եղել, թե ո՞ր պարտականությունները չկատարելու համար է վրա հասել տուգանքը: Այլ հարց է, որ դիմողի համար անհասկանալի է, թե ինչո՞ւ է օրենսդիրն իրեն ծանրաբեռնել նման պարտականություններով:

Դիմողը խնդրո առարկա դրույթը վիճարկել է նաև դրանով սահմանված տուգանքի չափի սահմանադրականության մասով՝ մատնանշելով, մասնավորապես, որ այն չի համապատասխանում համաչափության սահմանադրական սկզբունքին, և որ անհասկանալի է տուգանքի նման չափի սահմանումն այն պայմաններում, երբ ավանդատուն նյութական որևէ վնաս չի կրում կամ ավանդատուն ցանկացած ժամանակ կարող է պահանջել և ստանալ իր քաղվածքը՝ վերականգնելով իր ենթադրյալ խախտված իրավունքը:

Սահմանադրական դատարանի դատական կազմը գտնում է, որ դիմողի նման փաստարկները սահմանադրականության խնդիր չեն առաջացնում, քանզի պարտականության կատարմամբ ապահովված իրավունքն իրացնելու հնարավորությունների ընտրության իրավունքը կոնկրետ դեպքում վերապահված է ավանդատուին, որը պարտականություն կրողին չի ազատում իր բոլոր պարտականությունները պատշաճ կատարելու պահանջից. տուգանքն ուղղված է պարտա-

կանությունների կատարումն ապահովելուն, իսկ տուգանքի չափի սահմանումը օրենսդիր մարմնի իրավասությունների տիրույթում է, և միայն հիմնավորված դիմում ներկայացնելու դեպքերում դրանց համաչափությունը կարող է քննարկման առարկա դառնալ Սահմանադրական դատարանում, ինչը սույն դիմումի շրջանակներում բացակայում է:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումներով գործի քննությունը ... կարող է մերժվել նաև այն դեպքերում, երբ անհատական դիմումն ակնհայտ անհիմն է...»: Այս պահանջի լույսի ներքո Սահմանադրական դատարան անհատական դիմում ներկայացնելիս անձը պետք է հստակ պատկերացնի իր նկատմամբ վերջնական դատական ակտով կիրառված օրենքի **նորմի բովանդակությունը** և փորձի գնահատել ու նախատեսել Սահմանադրական դատարանում իր իրավունքների պաշտպանությանն ուղղված և Սահմանադրությամբ ու օրենքով թույլատրելի հետագա գործողությունները, ինչպես նաև պետք է բավարար կերպով իրավաբանորեն հիմնավորի, թե իր սահմանադրական ո՞ր իրավունքներն են խախտվել և ի՞նչ է ակնկալում Սահմանադրական դատարանում դիմումի քննության արդյունքում:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Անհատական դիմումը պետք է հղումներ պարունակի նորմատիվ իրավական ակտի այն դրույթներին, որոնց սահմանադրականությունը վիճարկվում է, և հիմնավորումներ, որ նորմատիվ իրավական ակտի հակասությունը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի անելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը»:

Միաժամանակ, դիմողը պետք է պատշաճ ձևով հիմնավորի, թե իր կողմից վիճարկվող նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական ո՞ր իրավունքն է խախտվել, ինչպես նաև հիմնավորի իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթ-

ների հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, այսինքն՝ կատարի պահանջներ, **որոնք չպահպանելը**, ըստ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 5-րդ մասի, անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

### Ո Ր Ո Շ Ե Ց .

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝



20 ապրիլի 2020 թվականի  
ՍԴԴԿՈ-23